# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇՆՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շնող համայնք,
Հեռ. 0253 6 35 34 , shnogh.lori@mta.gov.am

**ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ**
**ՄԱՐԶՊԵՏ**
**ԱՐԹՈՒՐ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ**

N 14
16 *հունվարի 2015թ.*

Ձեզ եմ ներկայացնում Շնող համայնքի ավագանու 29 դեկտեմբերի 2014թվականի թիվ 45 որոշումը:

Առդիր 2 թերթ.

1/26/2015

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ X ՀՈՎԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇՆՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շնող համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Շնող, 0253 6 35 34, shnogh.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2014թվականի N 45

## <<ՇՆՈՂԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՄԲՈՒԼԱՏՈՐԻԱ>>ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ <<ՇՆՈՂԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՄԲՈՒԼԱՏՈՐԻԱ>>ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Քաղաքացիական օրենսգրքի 63-րդ հոդվածի 1-ին մասի , <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 14-րդ կետով և <<Պետական ոչառևտրայինկազմակերպությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդհոդվածի 5-րդ մասի , 24-րդ հոդվածի առաջին մասի դրույթներով

## ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1.<<Շնողի բժշկական ամբուլատորիա>> փակ բաժնետիրական ընկերությունը(այսուհետ` ՓԲԸ) վերակազմավորման ձևով վերակազմակերպել <<Շնողի բժշկական ամբուլատորիա>> համայնքային ոչ առևտրային կազմակերպություն /այսուհետՀՈԱԿ/
2.Հաստատել<<Շնողի բժշկական ամբուլատորիա>>փակ բաժնետիրական ընկերության վերակազմավորման կարգը,պայմանները,տեղաբաշխման բաժնետոմսերի և այլ արժեթղթերի մարման կարգը
3.Հաստատել ՓԲԸ գույքի և գույքային իրավունքների` ՀՈԱԿ-ին փոխանցման ակտը, որում առկա են վերակազմակերպվող ընկերության գույքի և պարտատերերին ու պարտապաններին վերաբերվող բոլոր պարտավորությունների իրավահաջորդության մասինդրույթները
4.Հաստատել համայնքի ղեկավարի կողմից ներկայացված <<Շնողի բժշկական ամբուլատորիա>> ՀՈԱԿ-ին սեփականության իրավունքով հանձնվող գույքի կազմը`համաձայն Հավելված 1-ի
5.Ընկերության կողմից օգտագործվող համայնքային սեփականություն հանդիսացող շենքերն ու շինությունները ,անհատույց օգտագործման իրավունքով տրամադրել ՀՈԱԿ-ին ` դրանց նպատակային նշանակությանը համապատասխան օգտագործելու պայմանով `Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շնող համայնքի ղեկավարի հետ կնքված պայմանագրի հիման վրա:
6.Հաստատել համայնքի ղեկավարի կողմից ներկայացրած <<Շնողի բժշկական ամբուլատորիա>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը

7.<<Կազմակերպության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի <<է>> ենթակետով 14-րդ հոդվածով նախատեսված լիազորությունները վերապահել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շնող համայնքի ղեկավարին
8.ՓԲԸ-ի տնօրենին՝ ընկերության պարտատերերի առկայության դեպքում բոլորին օրենքով սահմանված կարգով ծանուցել ընկերության վերակազմավորման մասին

Կողմ 5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԶԱՐՅԱՆ ԱՐՏԱԿ
2. ԱՄԻՐՋԱՆՅԱՆ ԱՐԵՎՇԱՏ
3. ԱՎԵՏՅԱՆ ԳԵՎՈՐԳ
4. ՄԱՐԳԱՐՅԱՆ ՄԿՐՏԻՉ
5. ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ ՄԻՔԱՅԵԼ
6. ՉԻՉԱԿՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՎԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ